Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցը բավարարել **ամբողջությամբ**.

1.1. անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.11.2024 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը:

1.2. անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.11.2024 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. ՀՀ առողջապահության նախարարությունից հօգուտ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի բռնագանձել 200 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. **Վճռի <<Եզրափակիչ>> մասի 1.1., 1.2. և 2. կետերը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Օհանյան) 13.09.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի փաստացի կատարումը:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am